ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 27-ին, Վարագա Ս. Խաչի կիրակի օրը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, սրբալույս մեռոնի օծմամբ, եպիսկոպոս ձեռնադրեց Ս. Երուսաղեմի միաբան Տ. Հուսիկ ծ. վրդ. Բաղդասարյանին, Մարսելի հայոց առաջնորդ Տ. Տարոն ծ. վրդ. Ճերեճյանին, Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գարեգին ծ. վրդ. Բեքճյանին և Շվեյցարիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Վիգեն ծ. վրդ. Այքազյանին։

Սեպտեմբերի 26-ին, շաբաթ օրը, երեկոյան հանդիսավոր ժամերգությունից հետո, համաձայն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոնների, կատարվեց նորընծաների «քննություն և ուխտադրություն»։

Մայր տաճարում, Իջման ս. սեղանի առաջ, հոգեշնորհ Տ. Հուսիկ, Տ. Տարոն, Տ. Գարեգին և Տ. Վիգեն վարդապետները ուխտում են «Հաստատարիմ լինել Ս. Էջմիածնին մինչև ցմախճան կենաց իւրեանց, կալ մնալ հլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեանն և հրամանաց Սրբոյ Կաթողիկէ Ս. Աթոռոյս»։

Ընթերցումից հետո նորընծաները ստորագրում են ուխտագիրը։ Ավանդության համաձայն ստորագրում են նաև Մայր տաճարի լուսարարապետ գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը և Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը։

Հաջորդ օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով, ընթացս օրհնելով հավատավոր ժողովրդին, Ս. Էջմիածնի զանգերի ղողանջների ներքո, առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու ս. պատարագ և կատարելու եպիսկոպոսական ձեռնադրություն։ Վեհափառ Հայրապետին որպես առընթերակա ուղեկցում են Երուսաղեմի

Մի պահ ձեռնադրության արարողությունից

հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ եպս. Պարսամյանը: Այս սրբազան ձեռնադրության խարտավիլակի պաշտոնը ստանձնել էր Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Եպիսկոպոսական ձեռնադրության հանդիսավոր արարողությանը ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, սրբազան հայրեր, թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբանությունը և պաշտոնեությունը, ազգային-հասարակական գործիչներ, մեծ թվով ուխտավորներ և հավատացյալների խուռներամ բազմություն Հայաստանի տարբեր շրջաններից և Սփյուռքից:

Մայր տաճարի Ս. Ստեփանոսի խորանի առաջ սկսվում է ձեռնադրության արարողությունը: Ձեռնադրության խարտավիլակ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը Ձեռնադրության Մաշտոցից բարձրաձայն ընթերցում է հետևյալ տողերը. «Ծնորհազարդ Ս. Հայրապետ ... զի միաբանք՝ Սրբոյ և Առաքելական Աթոռոյս Էջմիածնի, հանդերձ համօրէն ուխտիս, այսինքն եպիսկոպոսունք, քահանայք, սարկաւագունք... այլ և իշխանք և աղքատք, խնդիր ունիմք ի բարձրագահ Տէրութենէդ»:

Ապա Հայոց Հայրապետի պատասխան «Հրամայեալ է ձեզ ի Տեառնէ յառաջ մատչել և ողջամիտ դիտաւորութեամբ բացայայտել մեզ զոր ինչ խնդրէքդ» ընթերցումից հետո սրբազան հայրեր, քահանաներ, սարկավագներ, իշխաններ և աղքատներ մոտենալով համբուրում են Նորին Սրբության աջը: Այնուհետև նորընծաները, ծնրադիր աղոթելով Իջման ս. սեղանի առաջ, համընթաց մոտենում են Վեհափառ Հայրապետին՝ տալու իրենց հավատի ուղղափառ խոստովանությունը և ստանալու եպիսկոպոսության աստիճաններ: Ամենայն Հայոց Հայրապետն իր աղոթքներով և օրհնությամբ հոգեշնորհ վարդապետներին շնորհում է եպիսկոպոսական կոչման յոթ աստիճաններ և համապատասխան զգեստ:

Հուսկ հետո եկեղեցական թափորով և խնկարկությամբ ձեռնադրության ու ս. պատարագի արարողությունը շարունակվում է Ավագ ս. սեղանի վրա: Այստեղ Վեհափառ Հայրապետը Ձեռնադրության Մաշտոցից ընթերցում է ձեռնադրության մեծ աղոթքը. «Դու Տէր, այսօր վերածէր տնօրէնութեամբ քո ի քահանայապետական շնորհ, տուր սոցա նմանիլ քեզ՝ ճշմարիտ Հովուիդ, դնել զանձինս իւրեանց ի վերա ոչխարաց, առաջնորդ լինել կուրաց, լոյս խաւարելոց, խրատիչ անզգամաց, լուսատու տիեզերաց...»:

Անհավասիկ հոգևոր վերացման հուզումնալից պահն է: Նորընծաները ծնրադիր, դեմքները դարձրած դեպի հավատացյալների հոծ բազմությունը, «Աստուածային և երկնաւոր շնորհ» հոգեցունց շարականի երգակցությամբ, հրաժարվում են աշխարհի ունայնությունից: Ապա Հայոց Հայրապետը շարունակում է եպիսկոպոսական ձեռնադրությունը և կատարում սրբազան օծման կարգը: Նորաօծ եպիսկոպոսներին տրվում է եպիսկոպոսական գավազան և մատանի:

Սուրբ Գրական, սրբազնագույն հայրերի աղոթքների ընթերցումից, շարականների երգեցողություններից հետո ընթերցվում է վերջին Ավետարանը և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում ձեռնադրության հանդիսավոր արարողությունը:

Վեհափառ Հայրապետը սուրբ մեռոնով օծում է աջը Տ. Հուսիկ եպիսկոպոս Բաղդասյանի .

Հավարտ սրբազան խորհրդի Նորին Սրբությունը նորապսակ եպիսկոպոսներին տալիս է իր հայրապետական պատգամն ու խորհուրդները:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Եւ լցան ամենեքեան Հոգւովն Սրբով»:

Սիրելի հավատացյալներ, այս պահին եկեք միասին նշենք այն դեպքը, հրաշալի դեպքը անկրկնելի, որ պատահեց Հիսուսի Հարությունից հիսուն օր հետո, ինչպես պատմում է մեզ Նոր Կտակարանը:

Հիսուսի Համբարձումից հետո, բնական է, յուր աշակերտները մնացել էին տխուր-տրտում և նաև հուսահատած, քանզի իրենց մեջ չունեին այլևս Մեծ Ուսուցչին և հստակ չէին պատկերացնում իրենց ապագա անելիքը: Հավաքվում էին հաճախ մի համեստ կտուրի տակ, Վերնատուն կոչված, ներա էր գտնվում և Աստվածամայրը հաճախ, հիշում էին Աստուծո Որդուն, Նրա քարոզները, Նրա պատվիրանները, Նրա քաղցր հոգին և մխիթարվում այդ հիշատակություններով միայն: Եվ ահա հիսուներորդ օրը պատահեց այդ հրաշալի դեպքը, երբ նրանք՝ Հիսուսի աշակերտները և Աստվածամայրը, հոգեկան վերացման բացառիկ մի կացության մեջ հանկարծ զգացին ինչ-որ մի ուժ, որ իջնում է երկնքից հրեղեն լեզուների ձևով և իջնում ամեն մեկի գլխի վրա: Բոլորը շփոթվեցին, հարբածի նման եղան, սակայն ուժգին ցնցվեցին հոգվով և մարմնով, որովհետև զգացին և հիշեցին մանավանդ Հիսուսի խոսքը, որ պիտի ուղարկե Մխիթարիչ Ս. Հոգին Աստուծո: Եվ ահա հասկացան այդ պահուն, որ հենց Հիսուսի այդ նախատեսությունն է, որ իրականանում է և Ս. Հոգին ամեն մեկի հոգու մեջ: Եվ ամեն մեկը սկսավ խոսել, պատմում է Կտակարանը, մինչ այդ իրենց համար անծանոթ լեզուներով: Մի խոսքով նրանք լրիվ կերպարանափոխվեցին, պայծառակերպվեցին, ոգեշնչվեցին, ուժ, եռանդ ստացան հոգով և մարմնով և մանավանդ պայծառացավ նրանց մեջ այն գիտակցությունը, թե ինչ պիտի լինի հետագա իրենց գործունեությունը, իրենց առաքելությունը: Հիսուսի աշակերտներն այդ պահից իսկ դարձան ճշմարիտ առաքյալները Հիսուսի: Եվ ցրվեցին աշխարհով մեկ, ինչպես գիտեք, տարածելու համար Հիսուսի Ավետարանը: Եվ որոնցից երկուքը, վկայում են հնագույն ավանդությունները ոչ միայն հայկական, այլև ասորական, նույնիսկ եբրայական, որ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները այցելեցին, եկան նաև Հայաստան աշխարհ կամ ինչպես որոշ վկայությունների մեջ կա, եբրայական մանավանդ, Արարատյան երկիր, այսինք մեր Հայաստան հայրենիքը: Ահա այսպիսով առաքելական շունչը, Ս. Հոգու լույսը սկսավ տարածվել նաև Հայաստան աշխարհում: Եվ այն փոխանցվեց հաջորդաբար ձեռնադրությունների շնորհիվ, այնպես, ինչպես ավանդաբար կատարվեց այդ շրջանին ամենուր:

Ամեն ձեռնադրություն հետևանքն է այդ Ս. Հոգու գալստյան, որով Ս. Հոգու զորությունը շարունակվում է ձեռնադրությունների շնորհիվ՝ առաքյալներից սկսյալ մինչև մեր օրերը՝ եպիսկոպոսներ, կաթողիկոսներ և այլ եկեղեցական պատրիարքներ:

Վեհափառ Հայրապետը սուրբ մեռոնով օծում է աջը Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյանի

Ահա այդ պահը երևի մենք պետք է հիշենք այսօր, երբ ես իմ տկար ուժերով ներկայացնում եմ այդ առաքելական ավանդությունը, առաքելական հաջորդականության ավանդությունը: Եվ իմ տկար ուժերով, ինձանից անկախ, նույնիսկ կարող եմ ասել, իմ հանգամանքով, այդ Ս. Հոգու շնորհներն իմ ձեռնադրությամբ բաշխվեցին այս չորս երիտասարդ նորապսակ եպիսկոպոսներին:

Բոլորիս անունով, նաև ձեր անունով, ես շնորհավորում եմ նրանց և մաղթում եմ, որ այդ բոլոր շնորհները, որոնք բաշխվեցին այսօր նրանց, և այդ բոլոր պատվերները, որոնք փոխանցվեցին այսօրվա աղոթքների միջոցավ նրանց, դրանք պիտի մնան իրենց մեջ իբրև առաջնորդ, իբրև ուղեցույց իրենց ապագա սուրբ գործի ճանապարհին, մխիթարելու համար մեր հավատացյալ ժողովուրդը, զորացնելու նրանց հավատքը և քաջալերելու համար նրանց բարի գործերը, աստվածահաճո առաքինի գործերը նաև մեր Եկեղեցու պայծառության և մեր ազգի բարօրության նվիրված իրենց գործունեությունը: Այս բոլորը, որ ես մի քանի խոսքով ասացի, բոլորը մեկ սրբազան պարտականություն են հանդիսանում բազմաթիվ իրենց կողմերով և երանգներով:

Մեր չորս թեկնածուները, այսօր արդեն ձեռնադրված և օծված եպիսկոպոս, չորսն էլ արտասահմանում գործող հոգևոր հայրեր են, ծանոթ են մեզ վաղուց իրենց հավատքով, իրենց ուխտապահությամբ, իրենց եռանդուն աշխատանքով՝ ի պայծառություն մեր Եկեղեցվո և իրենց ծառայության նվիրյալ աշխատանքով իրենց համայնքներից ներս՝ ի մխիթարություն աշխարհում ցրված մեր հավատավոր ժողովրդի զավակներին:

Առաջինը կուզեի հիշել Տ. Հուսիկ եպս. Բաղդասյան, որ բազում տարիներ ի վեր կծառայե մեր Եկեղեցուն, մանավանդ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց իբրև միաբան: Բազում տարիներ աշխատած է վանքային տարբեր պաշտոնների մեջ, հետո Ամերիկա, իսկ հիմա կվերադառնա Երուսաղեմ՝ պատասխանատու պաշտոն ստանձնելու համար այնտեղ Նորին Ամենապատվություն Պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոսի կարգադրությամբ:

Երկրորդը Տարոն եպս. Ճերեճյան. նա Մայր Աթոռի հոգևոր ճեմարանն ավարտած է ժամանակին, և վերջի ավելի քան տասը-տասնհինգ տարիների ընթացքում, մոտ քսան տարիների ընթացքում հարավային Ֆրանսիայի տարբեր շրջաններում, հատկապես Նիս քաղաքում, ուր ինքն իր բացառիկ շինարար գործունեությամբ աչքի ընկավ և գնահատանքը վայելեց ոչ միայն մեր, այլև այդ տեղի՝ Նիսի և հարավային Ֆրանսիայի հայության: Այսօր ինքը կոչված է որպես եպիսկոպոս՝ հովվելու համայն հարավային Ֆրանսիայի շրջանը, կենտրոն ունենալով Մարսիլիա քաղաքը: Նա սիրված բարձրաստիճան հոգևորական է: Եվ մենք ընդառաջելով եկեղեցական վարչությունների դիմումներին, մենք էլ նրան արժանի գտնելով ձեռնադրել եպիսկոպոս և տալ նրան մեր Եկեղեցվո բարձրագույն հոգևոր աստիճանը, որ եպիսկոպոսական աստիճանն է:

Հաջորդ եպիսկոպոսն է Գարեգին եպս. Բեքճյան, նա էլ բազում տարիներ գործած է մեր Եկեղեցու ծոցի մեջ: Առաջին շրջանին Գերմանիա ուսած է, որպեսզի կարողանա շարունակել իր աստվածաբանական ուսումը և յուրացումը գերմաներեն լեզվի: Բազում տարիներ նա էլ գործել է հարավային Ֆրանսիայի տարբեր շրջաններում: Այսօր վերադարձավ ինքը Գերմանիա, ուր նոր մեծ համայնք է ստեղծվել, ինչպես գիտեք, ավելի քան

Վեհափառ Հայրապետը սուրբ մեռոնով օծում է աջը Տ. Գարեգին եպիսկոպոս Բեքճյանի

քաան-քաանհինգ հազար հայություն կա հավաքված Գերմանիո տարբեր շրջաններում՝ ութ-ինը քաղաքների մեջ: Համայնքները կազմված են կամ կազմվելու ընթացքի մեջ են: Ընդհանրապես այդ շրջանը հիմա կթևակոխե վերակազմության, կազմակերպման և հառաջդիմության նոր շրջան մը, որովհետև մենք հոչակեցինք Գերմանիան առանձին թեմ և իբրև թեմական առաջնորդ, եպիսկոպոսական աստիճանով, անշուշտ միջնորդությամբը այնտեղի ժողովրդի, եկեղեցական վարչական մարմիններին: Նա տիրապետում է գերմաներեն լեզվին և արդեն վկայություններ բերեց այս անգամ իր այս այցելությամբ, որ եռուն գործունեության լծված է, որպեսզի ամբողջ Գերմանիո մեջ Հայ Եկեղեցին կազմակերպված, ամուր հիմքերի վրա հաստատված մի սրբազան հաստատություն դառնա:

Եվ վերջապես չորրորդ թեկնածուն նույնպես երիտասարդ, ամենաերիտասարդը նրանց մեջ, մեր համակրելի Վիգեն եպիսկոպոսն է: Նա էլ Երուսաղեմի պատրիարքական Աթոռից: Երկար տարիներե ի վեր ծառայում է Շվեյցարիո մեջ, Ժնև քաղաքում, իբրև հոգևոր հովիվ: Բայց վերջին տարիներին Շվեյցարիայի հայերի թիվը քառապատկվեց, նույնիսկ ավելին և այսօր կան ավելի քան քսան հազարի շուրջ հայեր, ոչ միայն Ժնևում, այլ նաև տարբեր քաղաքներում: Այսպիսով անհրաժեշտությունը ստեղծվեց մեզ համար՝ Մայր Աթոռիս համար, որպեսզի Շվեյցարիան առանձին թեմ հոչակվի և օժտվի թեմական առաջնորդով՝ եպիսկոպոսական աստիճանով:

Մեր չորս եպիսկոպոսներն էլ երիտասարդ են, հավատքով լեցուն և եռանդով նվիրված մեր Եկեղեցվո ծառայության, պայծառության, հառաջդիմության, մեր ժողովրդի կարիքներին, նաև Հայաստանի կարիքներին: Նրանցից ոմանք մանավանդ իրենց պաշտոնի բերումով կարևոր մասնակցություն բերած են մեր այս դժվար օրերին Հայաստանի օգնության իմաստով՝ և՛ աղետյալ գոտում, և՛ Արցախում, և՛ այլ կարիքների համար:

Ես մաղթում եմ, որ հիմա այս ձեռնադրությամբ ավելի զորացած և պայծառացած Ս. Հոգու շնորհներով շարունակեն իրենց առաքելությունը մեր Եկեղեցու ծոցի մեջ երկար, շատ երկար տարիներ մինչև խոր ծերություն՝ ի փառս Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

«Ողջ լերուք զօրացեալ Ս. Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի մէնջ. ամէն»:

Վեհափառ Հայրապետի ոգեշունչ խոսքից հետո շարունակվում է ս. պատարագի հոգեպարար արարողությունը:

Ս. պատարագի ավարտից հետո, նորընծա եպիսկոպոսների պատվին, Վեհարանի սեղանատանը տրվում է ճաշկերույթ, ուր Վեհափառ Հայրապետը և ուրիշներ շնորհավորանքի ջերմ խոսքեր են ասում նորաօծ սրբազան հայրերին:

Հավարտ ճաշկերույթի նորապսակ եպիսկոպոսները երախտագիտության խոսք ասացին՝ հավաստիացնելով, որ հավատարիմ կմնան իրենց ուխտին և Ս. Էջմիածնին:

Ձեռնադրությանը հաջորդած շաբաթվա ընթացքում նորընծա սրբազան հայրերն իրենց ուխտի պատարագները մատուցեցին Ս. Էջմիածնում, Ս. Աստվածածին եկեղեցում և Ստեփանավանի Ս. Աստվածածին եկեղեցում:

Վեհափառ Հայրապետը սուրբ մեռոնով օծում է աջը Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանի

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս ջերմորեն շնորհավորում է նորապսակ սրբազան հայրերին՝ այն հույսով ու հավատքով, որ նրանք իրենց ողջ գիտակցական և հոգևոր կարողություններն ի սպաս կդնեն ի բարություն և ի պայծառություն Հայաստանյայց Մայր Եկեղեցուն: